Նորան, Նորա որդուն, Հօրը, եւս Աբու Աբբաս Վազիին, որի անունն էր Սմբատ ի. Աշոտ, Նորա հետ միասին Աղուանից իշխան Մուսիայ ի. Սահլ ի. Սմբատին, նաեւ Ատրներսեհ ի. Խաչակ Խաշանիին։

238, 239, 240 թթ. Ալի ի. Եահեայ հայը արշաւեց Ցունաց վերայ։

248 թ. Ալի ի. Եահեայ վերադարձաւ Ասորիքի սահմանագլխից եւ նշանակեցաւ կառավարիչ Հայաստանի եւ Ատրպատականի վերայ։

249 թ. Օմար ի. Օբայդալլահի սպանումից յետոյ Ցոյները եկան Միջագետքի սահմանագլուխը, բաղձալով խլել այստեղ գտանուող մուսլիմների հողերը։ Առնելով այս լուրը՝ Ալի ի. Եահեայ (որ Հայաստանից եկել էր Մարտիրոսաց քաղաքը) Նոցա դէմ ելաւ քաղաքի եւ Սալսալայի բնակիչների բազմութեան հետ եւ նահատակեցաւ մօտ 400 մարդու հետ ռամադան ամսին։

251 թ. Ալայ ի. Ահմեդ՝ Բուղայ Շարաբիի օգնականն՝ զեկուցում գրեց Հայաստանի հարկերի եւ հողերի մասին, պատմելով, ինչ որ պատահել էր (Նորա) երկու հարկահանների հետ այս գաւառը շրջելիս, որոնց անունները նա յիշեց. ժողովուրդը յարձակեցաւ Նոցա վերայ, այնպէս որ Նոքա ստիպւած եղան մտնել մի ամրոց. բայց ամբոխը գրեց Նորա առջեւ մաղանի եւ սկսեց նեղել. հարկահանները դուրս եկան ամրոցից փախստեամբ եւ յայտնի չէ, թէ ինչ եղան. իսկ ամրոցը մնաց ապստամբների ձեռքում։

257 թ. Մուտամիդ ամիրապետը պատգամաւորներ ուղարկեց Խայ ի. Շայխի մօտ, առաջարկելով Նորան հանգիստ կերպով հեռանալ Ասորիքից եւ ստանձնել Հայաստանի վարչութիւնն։ Խայ ի. Շայխ համաձայնեցաւ եւ գնաց Ասորիքից Հայաստան։